

տող ու լսում, որ այստեղի երեխաները փոխանակ մի որ և իցէ հին երգ ասելու, գոռում են՝ «Հաստատ ժամանակը գալիս է, հոգիս սիրող է ծարաւ...» ան քեզ առաջադիմութիւն:

Երբեմն Բաղարովը գնում էր գիւղ և մի որ և իցէ գիւղացու հետ սկսում: Ըստ սովորութեան, ծաղրանքով զրոյց անել: «Հը՛, ախպեր ջան», ասում էր նա «դէ՛ մի կեանքի մասին քո աշխարհակցութիւնդ պարզես ինձ. ախր ասում են դուք էք Ռուսիայի բոլոր ապագան և ուժը, պատմութեան մէջ ձեզանով նոր էջ է սկսուելու, — դուք թէ իսկական լեզու, և թէ օրէնք էք տալու»: Գիւղացին կամ ոչինչ պատասխան չէր տալիս, կամ սրա նման խօսքեր ասում՝ «Մենք կարանք... որ է, ինչքան որ հող ա բաժին ընկելու» — «Իսկ ինձ հասկացրու, թէ ինչ բան է ձեր աշխարհը (հասարակութիւնը)» ընդհատում էր Բաղարովը նրա խօսքը, — դա հո ան աշխարհը չէ՛, որ երեք ձկների վրայ է հաստատուած: *)

— Էդ, աղա ջան, աշխարհն է երեք ձկների վրայ, — հանգուցիչ, նահապետական բարեհոգի եղանակով ասում էր գիւղացին երկարացնելով, — իսկ մեր հասարակութիւնը, լալտնի բան է, աղեքանց կամքը չի. դուք հո մեր հալրն էք: Քանի աղէն խիստ պահանջող լինի, էնքան գիւղացիք նրան հաւան կ'կենան:

Այսպիսի խօսքեր լսելով, Բաղարովը մի անգամ արհամարհանքով ուսերը վեր քաշեց ու շուռ եկաւ, իսկ գիւղացին իր ճամբան շարունակեց:

— Էդ Բնչ էիք խօսում, — հարցրեց նրան մի ուրիշ, միջին տարիքի ու խոժոռ դէմքով գիւղացի, որ հեռու, իւր խորճի շեմքին կանգնած, տեսել էր նրանց խօսակցութիւնը: — Չտուած հարկի մասին հո չէր:

— Ի՛նչ հարկ, Բնչ բան, — պատասխանեց առաջին գիւղացին, և նրա ձայնի մէջ ոչ միայն նահապետական արտաբանութեան հետքն անգամ չկար, հասկա ընդհակառակն, արհամարհոտ դաժանութիւն էր զգացւում, — հէնց էնպէս, ինչ ասես դուրս էր տալիս. լեզուն քոր էր գալիս. աղա չէ՛ քեզ. Բնչ նրա խելքի բանն ա:

— Ի՛նչ խելքի բանն ա, — պատասխանեց միւս գիւղացին

*) Ռսերէն Մյրք նշանակում է աշխարհ, և համայնք: Ծ ի.

և երկուսն էլ, գլխարկները թափ տալով ու դռու ծալքերը հաւաքելով, սկսան իրենց գործերի ու կարիքների վրայ խօսել: Աւաղ, ուսերն արհամարհանքով վեր դցող, գիւղացիների հետ խօսել կարողացող Բաղարովը (ինչպէս պարծենում էր Պաւէլ Պետրովիչի հետ վիճելիս), ալդ ինքնազատաւ Բաղարովը չէր կարծիք տանում, որ գիւղացիների աչքում ինքը դարձեալ տակի մասխարի պէս մի բան էր:

Սակայն վերջապէս իրեն համար գործ գտաւ նա: Մի անգամ Վասիլիւ Իւանովիչը նրա ներկայութեամբ կապում էր մի գիւղացու վիրաւոր ոտքը, բայց ծերունու ձեռները դողդողում էին և չէր կարողանում վիրակապը կարգին փաթաթել, որդին օգնեց, և ալդ օրուանից սկսաւ մասնակցել հօր բժշկութեան գործին, և միևնույն ժամանակ ծաղրիւ և՛ ամբողջականները, որ ինքն էր խորհուրդ տալիս գործածել, և հօրը, որ անմիջապէս գործ էր դնում ալդ: Բայց Վասիլիւ Իւանովիչն ամենեւին չէր շփոթւում Բաղարովի ծաղրից, հապա մինչև անգամ դրանով մխիթարւում էլ էր: Եւրոտած գիշերազգեստը երկու մատով փորի վրայ բռնած ու չլքուխը ծխելով, նա գոռութեամբ լսում էր Բաղարովի ասածները, և որքան աւելի չարութիւն լինէր նրա խօսքերի մէջ, այնքան աւելի բարեհոգութեամբ քրքշում էր, և երևան հանում իւր բոլոր, մինչև վերջին սեպցած ատամները: Նա մինչև անգամ կրկնում էր որդու երեմնի բռն կամ անիմաստ խօսքերը, և օրինակ մի քանի օր շարունակ տեղի-անտեղի կրկնում էր ալս՝ «Եէ, ալդ իննի բան է» միմիայն այն պատճառով, որ որդին իմանալով, թէ նա առաւօտեան ժամ է գնացել, ալդ դարձեալ չէր գործ անել: «Փառք Աստուծոյ, թախծն անցաւ» — կրկնում էր նա իւր ամուսնուն. «ալսօր ինչպէս գլուխս լուաց. տեսնելու բան էր»: Եւ այն միտքը, թէ մի ալսպիսի օգնական ունէր, բերկրութեամբ և հպարտութեամբ լցնում էր նրան: «Հապա, հապա», ասում էր նա տղամարդի կապալ հագած ու պոչաւոր գլխանոցով մի որ և իցէ գեղջկուհու գիլեարդի ջրի շիշը կամ քսելու իւղի սրուակը տալով: «դու, սիրելիս, պէտք է ամեն մի բոպէ Աստուծուն փառք տաս, որ որդիս ալստեղ հիւր է՝ — դու ալժմա ամենագիտական ու նորագոյն միջոցով ես բժշկւում, հասկանում ես թէ ոչ: Ֆրանսիացիների կալսըը Նապօլէօնը, մինչև անգամ նա էլ սրանից լաւ բժիշկ չունի»: Իսկ գեղջկուհին որ եկել էր լալտ-

նելու, որ լծակոցքն է դուրս եկել» (Թէպէտ այս խօսքերի իմաստը նա ինքն էլ չէր կարող բացատրել), շարունակ զլուխ էր տալիս ու ձեռքը ծոցը տանում, ուր նա երեսօրբի ծալրին կապած չորս ձու էր բերել:

Բաղարովը մի անգամ նոյն իսկ գազի ապրանք ծախող փերեզակի աստամը հանեց, և Թէպէտ այդ աստամը սովորական աստամներից էր, բայց Վասիլիյ Իւանովիչը իբրև հաշուազիւտ բան պահեց այդ և, տէր Ալեքսէյին ցոյց տալով, շարունակ կրկնում էր.

— Մի մտիկ տուէք, Թէ ինչպիսի արմատներ ունի. ի՞նչ ոյժ պէտք է ունեցած լինի Եւգենիս: Խեղճ փերեզակը օդի մէջ կախ ընկաւ... Հաւատա կաղնի որ լինէր, այն էլ արմատով կհանէր...

— Դուվելի է,— խօսեց վերջապէս տէր Ալեքսէյը, որ չը գիտէր Թէ ի՞նչ ասի և ինչպէս ազատուի ոգևորութեամբ գրգռուած ծերուկի ձեռքից:

Մի անգամ հարեան գիւղից մի գիւղացի իւր ժանտա-տենդով հիւանդ եղբօրը բերեց Վասիլիյ Իւանովիչի մօտ. խեղճը երեսի վրայ լարդի վրայ ընկած մեռնում էր. սև բծերը ծածկել էին նրա մարմինը. նա վաղուց էր գիտակցութիւնը կորցրել: Վասիլիյ Իւանովիչը ցաւ լալանեց, որ ոչ ոք միտք չէր արել մի քիչ առաջ դիմելու բժշկութեան և ասաց, որ ազատում չկալ: Յիւրաւի գիւղացին գեղ չհասած՝ եղբայրը ճամբին կառքի մէջ էլ մեռաւ:

Նրեք օր անց Բաղարովը մտաւ հօր սենեակը և հարցրեց, Թէ արդեօք խարանաքար չունի:

— Ունիմ. ինչի՞դ է:

— Պէտք է... վէրք ալրելու համար:

— Ո՞ւմ վէրքը:

— Իմ:

— Ինչպէս Թէ քո: Ինչո՞ւ համար: Ինչ վէրք: Ո՞ւր է:

— Ահաւասիկ, մատիս վրան է: Այսօր գնացել էի հարեան գիւղը, այն որ ժանտատենդով հիւանդ էին բերել: Զգիտեմ ինչու պատրաստում էին հանգուցեալի մարմինը՝ ձգքել, իսկ ես վաղուց է ալդ բանի փորձը արած չէի:

— Յետո՞յ:

— Յետոյ գաւառական բժշկին խնդրեցի, որ Թողնէր ձեռքը և մատս կտրեցի:

նովիչը
որդու ա
նունը չէր
կողմնակի
թեմէ
մոտեց
հետե
նունը
կտրուեց
և
նրան
խօսք
տուե
նովիչը
Արիւն
սխե
էր
պահե
սխե
էր

Վասիլիյ իւանովիչը լանկարծ բոլորովին սպրդնեց և, առանց մի խօսք ասելու, վաղեց իւր առանձնասենեակը և անմիջապէս խարանաքարը ձեռքին դուրս թռաւ։ Բաղարովի ուղղում էր քարն առնել ու դնալ։

— Ի սէր Աստուծու, — աղաչական ձայնով ասաց Վասիլիյ իւանովիչը, — թող ինքս անեմ։

Բաղարովը քմծիծաղեց։

— Ի՛նչ սէր ես ունեցել բժշկութիւն անելու։

— Հանաք մի անի, ի սէր Աստուծու։ Յոյց տուր մատդ՝ վէրքը մեծ չէ։ Չի ցաւում։

— Հուպ տուր, մի վախի։

Վասիլիյ իւանովիչը կանգ առաւ։

— Ինչ ես կարծում, Եւգենիյ, աւելի լաւ չէ երկաթով ավրենք։

— Այդ առաջ պէտք էր անել։ Իսկ այժմ, իսկապէս, խաւարանքարն էլ աւելորդ է։ Թէ որ վարակուած լինիմ, ահա ժամանակ արդէն ուշ է։

— Ինչպէս թէ... ուշ է... — հազիւ կարողացաւ արտասանել Վասիլիյ իւանովիչը։

— Ի հարկէ, անցածն արդէն չորս ժամից աւելի է։

Վասիլիյ իւանովիչը վէրքը մի քիչ էլ ավրեց։

Բայց միթէ գաւառական բժիշկը խարանաքար չունէր։

Ինչ բան է, Տէր Աստուած։ Բժիշկ լինի ու մի փեշտ բան չունենալ։

« Կնշտրակը տեսնէիր, — ասաց Բաղարովի կաւ։

միւս օրն ամբողջ օրը Վասիլիյ իւա-

հնարաւոր առիթ էր գտնում իւր

Դէպէտ ոչ միայն նրա վէրքի ա-

սկ աշխատում էր բոլորովին

բայց, այնպէս լամառու-

ին և մի այնպիսի վեր-

Նաղարովի համբերու-

նալ, Վասիլիյ իւա-

հանիլ, մանա-

կէ ամեն բան

ոճ անել,

Թէ ինչի՞նչ չի քնում, թնչ է եղել նրան։ Ամբողջ երկու օր նա սրտապնդում էր, Թէպէտ որդու հալը, որին նա թագուն թագուն դիտում էր դարձեալ, մի հալ չէր... բայց երբորդ օրը ճաշին էլ չհամբերեց. Բազարովը գլուխը կախ գցած նըստել էր և ոչ մի կերակրի ձեռք չէր տալիս։

— Ինչո՞ւ բան չես ուտում, Եւգենիյ, — ասաց նա դէմքին բռնովին անհոգ արտալատութիւն տալով, — Վարձես կերակուրը լաւ է պատրաստած։

— Չեմ ուզում — չեմ ուտում։

— Ախորժակ չունիս։ Գլուխդ հո չի ցաւում, — աւելացրեց նա վեհերկոտ ձայնով։

— Ցաւում է։ Ինչո՞ւ չպիտի ցաւի որ։

Աննա վլասիննան շտկուեցաւ ու ականջը սրեց։

— Խնդրեմ չնեղանաս, Եւգենիյ, — շարունակեց Վասիլիյ Իւանովիչը, թող տուր մի դարկերակդ նախմ։

Բազարովը տեղից վերկացաւ։

— Ես առանց նալելուդ էլ կ'ասեմ, որ տաքութիւն ունիմ։

— Դող էլ ունէիր։

— Դող էլ ունէի։ Գնամ պառկեմ. իսկ դուք ինձ լորենու ծաղկի թէլ ուղարկեցէք։ Երեւի մրսել եմ։

— Գիտեմ որ այս դիշեր հազում է՞ր, — ասաց Արինա Վլասիննան։

— Մրսել եմ, — ասաց Բազարովը և հեռացաւ։

Արինա Վլասիննան սկսաւ լորու ծաղկից թէլ պատրաստելով զբաղուել, իսկ Վասիլիյ Իւանովիչը մտաւ կողքի սենեակը ու անձախ բռնեց գլխի մազերը։

Այդ օրը Բազարովը մէկ էլ տեղիցը վեր չկացաւ, և ամբողջ գիշերը ծանր, կէս մոռացութեան մէջ ընկած նիւհով անցկացրեց։ Գիշերը ժամը մէկին դժուարութեամբ բաց արաւ աչքը, կանթեղի լուսով իւր առաջ տեսաւ հօր դժգոյն դէմքը և պատուիրեց, որ հեռանալ. հալըը հնազանդեցաւ, բայց անմիջապէս էլ ոտքի ծալրերով ներս մտաւ և, կիսով չափ պահարանի դռնակներին ետեւ թաք կացած, անընդհատ որդուն էր նայում։ Արինա Վլասիննան էլ պառկած չէր և, առանձնասենեակի դուռը հազիւ հազ բաց արած, անդադար մօտեցնում էր ականջ դնելու Թէ ինչպէս է շունչ առնում Ենիւշան ու Վասիլիյ Իւանովիչին նայելու։ Նա իւր ամուսնու

միայն անշարժ, կղացած մէջքն էր տեսնում, բայց հէնց այդ-
քան էլ էր նրան մի քիչ թեթեւութիւն պատճառում: Առաւօ-
տեան Բաղարովը փորձեց վեր կենալ. գլուխը պտտոյ եկաւ,
քթից արիւն գնաց. նորից պառկեցաւ: Վասիլի ի վանովիչը
լուռ ու մունջ ծառայում էր նրան: Արինա Վասիլենան ներս
մտաւ ու հարցրեց, թէ ինչպէս է: Բաղարովը պատասխանեց՝
«մի քիչ լաւ եմ», և երեսը պատին արաւ: Վասիլի իւանովի-
չը երկու ձեռքը թափ տուեց կնոջ կողմը թէ գնա, սա շրթուն-
քը կծեց, որպէս զի լաց չլինի, ու դուրս գնաց: Ասես թէ
տան մէջ լանկարծ ամեն ինչ մթնեց. բոլորի դէմքերն էլ ձը-
գուեցան, տարօրինակ լուծթիւն ընկաւ. բակից հեռացրին,
գիւղ ուղարկեցին մի ձայնեղ աքլոր, որը երկար ժամանակ
չէր կարողանում հասկանալ, թէ ինչու էին իւր հետն այդպէս
վարւում: Բաղարովը դէմքը պատին պառկած էր դեռ: Վասի-
լի իւանովիչն ուզեց զանազան հարցեր տալ նրան: Բայց այդ
հարցերը Բաղարովին լողնեցնում էին, և ծերունին բազկաթո-
ռի մէջ մնաց արձանացած. միայն երբեմն մատներն էր չըրիս-
կացնում: Նա մի քանի րոպէ միայն գնում էր պարտեզ, ասեռ
աննկարագրելի ապշութեամբ բռնուած՝ մնում էր քարացած
(առ հասարակ ապշութեան արտաբայութիւնը նրա դէմքից
չէր հեռանում) ու նորից որդու մօտն էր գալիս աշխատելով,
որ կնոջ հարց ու փորձերից խոյս տալ: Կինը վերջապէս բըռ-
նեց նրա ձեռքից և ջղածգաբար, համարեա սպառնալով ա-
սաց. «Դէ մի ասս է, ի՞նչ ունի»: Այստեղ նա գլխի ընկաւ և,
ի պատասխանի նրա հարցման, զօր արաւ, ժպտալու. բայց
ինքն էլ սարսափեց, երբ տեսաւ, որ ժպտալու փոխանակ չը-
գիտես որտեղից ծիծաղ դուրս պրծաւ: Նա առաւօտուանից
բժշկի ետևից մարդ էր ուղարկել: Լարևոր սեպեց այդ բանն
իմացնել որդուն, որպէս զի չլինի թէ նեղանալ:

Բաղարովը գահաւորակի վրայ լանկարծ շուռ եկաւ, աչ-
քը սենեւած ու բութ հալեացքով մտիկ տուեց հօրն ու ջուր
ուզեց:

Վասիլի իւանովիչը ջուրը տուեց նրան և ի դէպ ճա-
կատն էլ շօշափեց: ձակատն ալրւում էր:

—Մերուկ,—ասաց Բաղարովը խապոտ ու դանդաղ ձախ-
նով,—բանս բուրդ է: Ես վարակուել եմ, և մի քանի օրից
ինձ կ'թաղես:

Վասիլիւ Իվանովիչը օրօրօւեցաւ, ասես թէ մէկը ոտնեքին խփած լինէր:

—Յւգենիւ,—թոթովեց նա,—ալդ ինչ ես ասում...Տէր ընդ քեզ: Դու մրսել ես...:

—Ի՛նչ ես ասում,—առանց շտապելու ընդհատեց նրան Բաղարովը:—Բժշկի ներելի չէ ալդպէս խօսել: Վարակուելու բոլոր նշաններն էլ կան, ինքդ էլ գիտես:

—Ո՞ր է...վարակվան նշան, Յւգենիւ... ի՛նչ ես ասում:

—Հապա ալս ինչ է,—ասաց Բաղարովը և շապկի թևը բարձրացնելով ցոլց տուեց մարմնի վրայ դուրս տուած չաբաղուշակ կարմիր բծերը:

Վասիլիւ Իվանովիչը ցնցուեց և ահից սառեց:

—Ասենք,—խօսեց նա վերջապէս,—ասենք, եթէ... եթէ մինչև իսկ...ալդպիսի մի բան... վարակումն...:

—Պիէմիա,—իշեցրեց որդին:

—Այո...մի տեսակ...եպիդեմիա...:

—Պիէմիա,—խիստ ու որոշ կերպով սկսեց Բաղարովը,—չլինի արդէն տետրակներդ մտահան ես արել:

—Հա, հա, իհարկէ, թող քու ասածը լինի...:Բայց դարձեալ կ'ըշտկենք քեզ:

—Տես որ չբժշկեա: Բայց բանն ալդ չէ: Ձէի կարծում, թէ ալդպէս շուտ կ'մեռնեմ. սա, ճիշտն առած, մի շատ անախորժ պատահմունք է: Այժմ դու էլ, մալրիկն էլ պիտի աշխատեք օդուտ քաղել ձեր խորին հաւատից. հաւատսիկ հաւատքը փորձի ենթարկելու առիթ:—Նա մի քիչ էլ ջուր խմեց:—Իսկ ես ուզում եմ քեզնից մի բան խնդրել...քանի դեռ գլուխս իմ իշխանութեան տակ է: Գիտես որ վաղը կամ միւս օր ուղեղս հրաժարական կ'տալ: Այժմ էլ արդէն վստահ չեմ, թէ մտքերս որոշակի եմ լաւանում, թէ ոչ: Մինչ պառկած էի, ինձ թւում էր, թէ չորս բոլորքս կարմիր շներ են վազվզում, իսկ դու իմ գլխի վերև փալտմորիկ տեսած որսի շան նման՝ մնացել էիր կանգնած: Հէնց գիտենաս հարբած լինեմ, լաւ ես հասկանում ասածներս:

—Ինչեր ես ասում, Յւգենիւ, բոլորովին կանոնաւոր կերպով ես մտքերդ լաւանում:

—Աւելի լաւ. ասացիր, որ բժշկի ես ուղարկել...Դրանով քեզ ես մխիթարել...ինձ էլ մխիթարես. մարդ զրկի...:

—Արկաղի Նիկալալիչին,—վրայ բերեց ծերունին:

—Ո՞վ է Արկադիոյ Նիկալայիչը,—ասաց Բաղարովը մտախոհութեամբ...—Ա՛խ, հա՛, ալդ նետափետուրը՝ Ոչ, նրան ձեռք մի տալ։ Նա ալժմ ճալ է դարձել։ Մի՛ զարմանալ։ սա դեռ ես զառանցանք չէ։ Դու մարդ զրկիր Օդինցեակին, Աննա Սերգէ-անային, ալտեղ մի աղղպիսի կալուածատէր կ'ին կալ... Ճանաչում ես։ (Վասիլիի Իւանովիչը գլխով արաւ)։ Կասես Եւգենիի։ Բաղարովը բարեւ էր անում ու ասում, որ մեռնում է, Կաննա։

—Կաննա... Բալց միթէ կարելի բան է, որ դու մեռնես, դու, Եւգենիի... Ինքդ դատիր։ Դրանից լետոյ էլ արդարութիւն կ'աւ։

—Ես ալդ չգիտեմ. բալց դու մարդ զրկիր։

—Այս րոպէիս կուզարկեմ, ինքս էլ նամակ կղրեմ։

—Ոչ, ինչ հարկաւոր է. միայն թող ասի, թէ բարեւ էր անում, ուրիշ բան պէտք չէ։ Իսկ ալժմ ես դարձեալ դէպի իմ շներս դառնամ։ Զարմանք բան. ուղում եմ, որ միտքս կանգ առնի մահուան վրայ, բալց բան չի դուրս գալիս։ Աչքին մի ինչ որ բիծ է երևում... ուրիշ ոչինչ։

Նա դարձեալ ծանր ծանր շուռ եկաւ պատի կողմը. իսկ Վասիլիի Իւանովիչը դուրս եկաւ առանձնասենեակից և, կնոջ ննջարանին հասնելով, հէնց ծնկան վրայ վէր ընկաւ սուրբի պատկերի առաջ։

—Աղօթք արա, Սրինա, աղօթք արա,—հառաչեց նա,—զաւակներս մեռնում է։

Բժիշկը, հէնց ալն գաւառական բժիշկը, որի մօտ խաբանաքար չէր գտնուել, եկաւ և, հիւանդին նախելով, խորհուրդ տուեց սպասողական եղանակի հետեւել, և իսկոյն էլ մի քանի խօսք ասեց, թէ կարելի է որ առողջանալ։

—Իսկ դուք տեսած կ'աւք, որ իմ դրութեան մարդիկ Եւգենիան դաշտ դնացած չլինեն,—հարցրեց Բաղարովը և, լանկարծ բռնեց գահաւորակի կողքին կեցած ծանր սեղանի ոտքից, ցնցեց ու տեղից շարժեց։

—Ոյժս, բոլոր ոյժս դեռ վրաս է, բալց դարձեալ մեռնելու եմ... Մեր մարդը որ մեռնէ, գոնէ նա կեանքից կշտացած կ'մեռնի, իսկ ես... Դէ գնա ու ժխտիր, մահ չկալ ասա։ Նա քեզ կ'ժխտի, պրծաւ գնաց։ Ալդ ո՞վ է ալդտեղ լաց լինում,—աւելացրեց նա մի քիչ մնալուց լետով։—Մալրս է. Խեղճ, էլ ումն է ալտուհետ իւր հրաշալի բորչը ուտացնելու։ Դժէ էլ, Վասիլի Իւանիչ, կարծես լաց ես լինում։ Դէհ, թէ քրիստոնէութե-

թիւնը չի օգնում, գոնէ փիլիսոփայ, ստուիկ դարձիր: ԶԲ պար-
ծենում էիր, թէ փիլիսոփայ ես:

— Ես ինչ փիլիսոփայ եմ,— հեկեկաց Վասիլի Իւանովիչն
ու արտասուքի կաթիլները ծոր տուին երեսին:

Ժամ ժամի վրայ Բազարովի դրութիւնը ծանրանում էր.
հիւանդութիւնն արագ ընթացք ստացաւ, որ սովորական է
վիրահատական թունաւորման միջոցին. Նա դեռ լիշողութիւ-
նը չէր կորցրել և ինչ որ ասում էին, հասկանում էր: Նա դեռ
մաքառում էր: «Չեմ ուզում դառանցել», շնչում էր բռունցք-
ները հուպ տուած,— «ինչ լիմարութիւն... Եւ իսկույն էլ ասում
էր. «Շը՛, ութնից որ տասը հանենք, քանի կ'մնալո՛ւ Վասիլի
Իւանովիչը գծուածի նման էր, մէկ այս միջոցն էր առաջար-
կում, մէկ այն, և շարունակ որդու ոտքերն էր ծածկում մի-
այն: «Սառը սաւանի մէջ փաթածել... սիրտ թափելու դեղ...
փորին տաքացնող... արին առնել», ասում էր նա լարուած
դրութեամբ: Բժիշկը, որին նա աղաչել էր մնալ, համաձա-
նում էր նրա ասածներին, հիւանդին լիմոնադ էր խմցնում,
իսկ իրեն համար էլ մերթ ծխամորճ էր ուզում, մերթ չամ-
բացնող-ջերմացնող», այսիքն օղի: Արիւնս վլասիկնան նստած
էր դրան տակ ցածիկի աթոռի վրայ և միայն ժամանակ առ-
ժամանակ աղօթելու համար էր դուրս գնում. մի քանի օր ա-
ռաջ նրա ձեռքից ընկել կոտորուել էր արդ ու զարդի հալելին,
իսկ այս բանս նա միշտ վատ նշան է համարել. ինքը Անֆի-
սուշկան էլ բան չէր գտնում նրան ասելու: Տիմաֆէիչը գնա-
ցել էր Օդինցեակին իմաց տալու:

Գիշերս Բազարովի համար վատ անցաւ... Սաստիկ տա-
քութիւնը նրան տանջում էր: Առաւօտեան դէմ մի քիչ թե-
թեացաւ. Նա խնդրեց, որ Արիւնս վլասիկնան գալ, իւր մա-
զերը սանդղէ, համբուրեց նրա ձեռքը, և մի երկու ումայ թէ
խմեց: Վասիլի Իւանովիչը մի քիչ կենդանացաւ:

— Փառք Աստուծոյ, ասում էր նա,— ճգնաժամը հասաւ...
ճգնաժամը հասաւ:

— Ա՛յ ինչ նշանակութիւն ունի բառ ասածդ,— խօսեց
Բազարովը:— Նա այդ բառը՝ «ճգնաժամը»՝ գտաւ և արդէն միս-
թարուած է: Զարմանալի բան, որ մարդս դեռ հաւատում է
բառերի: Նրան, օրինակ, լիմար անուանես ու չծեծես, նա կը
տխրի, բայց եթէ խելօք ասես ու փող էլ չտաս— գոհութիւն
կզգայ:

Բազարովի այս փոքրիկ խօսուածքը, որ նրա առաջուայ կծու ոճն էր լինեցնում, Վասիլիյ Իվանովիչին խանդակաթ դրուծեան հասցրին:

—Ապրիս. հրաշալի է, հրաշալի,—բացականչեց նա ու ալնպէս ձեացրեց, որպէս թէ ծափ է տալիս:

Բազարովը տխուր քմծիծաղեց:

—Հը՛, ինչպէս է ուրեմն, քու ասելովդ ճգնաժամն անցնու, թէ հասել է:

—Հիմի դու աւելի լաւ ես, ահա իմ տեսածս, ահա ինչն է ինձ ուրախացնում,—պատասխանեց Վասիլիյ Իվանովիչը:

—Դէ շատ լաւ ուրեմն. ուրախանալը երբէք վատ չէ: Իսկ ինչ մտքդ է, ուղարկեցիր:

—Հապա չ'ուղարկեցի:

Բազարովի դրուծեան թեթեւութիւնը երկար չքաշեց, Հիւանդութեան (թափը) գրգիռը կրկնուեց. Վասիլիյ Իւանովիչը նստած էր Բազարովի մօտ: Ասես թէ մի առանձին տանջանք չարչարում էր նրան. մի քանի անգամ ուզեց բան ասել, բայց չկարողացաւ:

—Եւգենիւ,—ասաց նա վերջապէս,—զաւակս, աչքիս լուսը, սիրելի զաւակս:

Այս անսովոր բացականչութիւնը ներգործեց Բազարովի վրայ...նա դուրսը փոքր ինչ շուռ տուեց և, ըստ երևութին, իրեն ճշող մտադրութեան լուծից ազատուելու ջանք գործ դրանելով ասաց:

—Ի՛նչ է, հայր իմ:

—Եւգենիւ,—շարունակեց Վասիլիյ Իւանովիչը, և Բազարովի առաջ ծունկի եկաւ, թէպէտ և Բազարովն աչքը չէր բաց արել և կարող չէր նրան տեսնել.—Եւգենիւ, դու ալժմ աւելի լաւ ես. Աստուած կտայ կառողջանաս. բայց օգուտ քաղիր այս միջոցից, ինձ ու մօրդ մխիթարիր, քրիստոնէական պարտքդ կատարիր: Որ իմանաս, թէ ինչ եմ զգում ալս բանը քեզ ասելիս, սարսափելի է. բայց աւելի սարսափելի կ'լինի...ախր լաւիտեանս է, Եւգենիւ...մի միտք արա, թէ ինչ...

Ծերուկի ձայնը կտրուեցաւ, իսկ որդու դէմքի վրայով, թէպէտ դարձեալ պառկած էր աչքը փակած, մի տարօրինակ բան անցկացաւ:

—Թէ որ ալդ բանը ձեզ կ'մխիթարէ, ինչու չէ, չեմ մերժիլ,—ասաց նա վերջապէս, բայց ինձ թուում է, որ շտապելու

բան չկալ: Ինքդ ես ասում, թէ ալժմ աւելի լաւ եմ:

—Լաւ ես, Եւգենիւ, լաւ: Բայց ի՞նչ գիտէ, հո ամեն բան Աստուծու ձեռին է, իսկ քրիստոնէական պարտքդ կատարելուց լեռու...

—Ոչ, դեռ կսպասեմ,—կտրեց խօսքը Բաղարովը:—Քեզ հետ ես էլ համաձայն եմ, որ ճգնաժամը հասաւ: Իսկ եթէ մենք սխալ ենք, ի՞նչ արած. հո լուշակորոյս մարդկանց էլ են հաղորդում:

—Այդ ի՞նչ ես ասում, Եւգենիւ...:

—Ես կսպասեմ: Իսկ ալժմ ուզում եմ քնել: Մի՛ խանգարիլ:

Եւ նա գլուխը առաջուալ տեղը դրեց:

Երբունին տեղիցը վեր կացաւ, նստաւ բազկաթոռի մէջ եւ, կղպլը ձեռքի մէջ առած, սկսաւ եղունգները կրծոտել...:

Յանկարծ ռեսսորով կառքի ձայնը, ափն ձայնը, որ առանձնապէս նկատելի է լինում գիւղական խուլ տեղում, հասաւ ծերունու ականջին: Թեթև անիւններն աւելի ու աւելի մօտենում էին. ահաւասիկ լսուեց ձիերի փռնչոցը... Վասիլիւ Իւանովիչը վեր թռաւ տեղից ու դէպի պատուհան վազեց: Բակը ներս էր մտնում չորս ձի լծած մի երկտեղ կարետ: Առանց իրեն հաշիւ տալու, թէ ի՞նչ կարող էր լինել սա, մի տեսակ անմիտ ուրախութեամբ բռնուած, դուրս վազեց դէպի պատշգամբ...: Նշանազգեստ հագած մի սպասաւոր բաց արաւ կտրետի դուռը. սև քող գցած մի տիկին, վրան սև թիկնոց առած, դուրս էր գալիս կառքից...:

—Ես Օդինցևան եմ,—ասաց նա:—Ո՞ղջ է Եւգենիւ Վասիլիւիչը: Դուք հայրն էք: Հետս բօրչկ եմ բերել:

—Բարի հրեշտակ,—բացականչեց Վասիլիւ Իվանովիչը և բռնելով տիկնոջ ձեռքը ջղաձգաբար հուպ տուեց շրթունքին, մինչդեռ Աննա Սերգէևնայի բերած բօրչկը, ակնոցաւոր, գերմանացու տիպարով մի կարճլիկ մարդ առանց շաապելու դուրս էր գալիս կառքի միջից:

—Ողջ է, ողջ է դեռ իմ Եւգենիւս, և ալժմ արդէն կփրկուի նա: Կնիկ, ա կնիկ... Երկնքից հրեշտակ է իջել...:

—Ինչ է եղել, Աստուած;—թոթովեց պառաւն ընդունաբանից դուրս վազելով, և առանց մի բան հասկանալու, հէնց աղտեղ, նախասենեակում ընկաւ Աննա Սերգէևնայի ոտքերը և սկսեց, գփի պէս, նրա շրջազգեստը համբուրել:

—Ի՞նչ էք անում, այս Բնչ էք անում, — կրկնում էր Աննա Սերգէնեան. բայց Արինա վախճանաւոր նրան ականջ չէր դնում, խոսի վասիլի Իվանովիչը շարունակ կրկնում էր, «հրեշտակ, հրեշտակ»:

—Wo ist der Kranke? Հիւանդն ուր է, — վերջապէս ասաց բժիշկը զայրացած:

Վասիլի Իվանովիչն ուշքի եկաւ:

Այստեղ է, այստեղ, եկէք ետեւիցս, վորտեստեր հերր կովկզա, — աւելացրեց նա ըստ հին սովորութեան:

—Է՛, ասաց գերմանացին ու թթու-թթու ժպտաց:

Վասիլի Իվանովիչը նրան առանձնասենեակ տարաւ:

—Աննա Սերգէնեա Օդինցեակի բերած բժիշկն է, — ասաց նա որդու ականջին կուացած, — ինքն էլ այստեղ է:

Բազարովը լանկարծ բաց արաւ աչքերը:

—Ի՞նչ ասացիր:

—Ասում եմ, որ Աննա Սերգէնեա Օդինցեան այստեղ է, և այս պարոն բժշկին բերել է քեզ համար:

Բազարովը աչքը շուրջ ածեց:

—Նա այստեղ է... ուզում եմ նրան տեսնել:

—Դու նրան կտեսնես, Եւգենի, բայց առաջ պէտք է խօսել պարոն բժշկի հետ: Որովհետեւ Սիդոր Սիդորիչը գնաց (այդ էր գաւառական բժշկի անունը), ուստի և հիւանդութեան ամբողջ պատմութիւնը նրանց կպատմեմ, և մենք մի փոքրիկ խորհուրդ կկազմենք:

Բազարովը մտիկ տուեց գերմանացուն:

—Դէ, խօսում էք, շուտ խօսեցէք, միայն լատիներէն չլինի. ես հո լատիներէն հասկանում եմ, թէ ի՞նչ է նշանակում jam moritur.

—Der Herr scheint des Deutschen mächtig zu sein, — սկսեց էսկուլապի նոր սանը՝ Վասիլի Իվանովիչին դառնալով:

—Իս...հոս քէ... աւելի լաւ է ռուսերէն խօսէք, — ասաց ծեբունին:

—Առ, լաւ..., — և խորհուրդը սկսուեց:

Կէս ժամ լետոյ Աննա Սերգէնեան Վասիլի Իվանովիչի ետեւից մտաւ առանձնասենեակ. Բժիշկն արդէն նրան կամացուկ լալտեւել էր, թէ հիւանդի առողջանալուն լոյս չկայ:

Աննա Սերգէնեան նախեց Բազարովին... և կանգ առաւ դրանը՝ — անը աստիճանի ապշեցրեց նրան այս բորբոքուածք:

քաղց և միևնույն ժամանակ մեռելալին դէմքը իւր պղտոր աչքերով, որոնք ուղղուած էին իրեն։ Ուղղակի մի տեսակ սառնուն ու չարատանջ վախ եկաւ վրան։ Կին միտքը, թէ ինքն մկտպիսի զգացմունք չէր զգալ, թէ որ իսկապէս սիրելիս լինէր Բաղարովին—վալրկենաբար անցաւ նրա մտքով։

—Շնորհակալութիւն,—զօրով խօսեց Բաղարովը։—այս քանին չէի սպասում։ Բարի գործ է արդ։ Ահաւասիկ, ինչպէս որ խոստացել էիք, մի անգամ էլ տեսնուեցանք։

—Աննա Սերգէնեան այնքան բարի էր,—սկսեց Վասիլիլ իւանովիչը...

—Հալը, մեզ մենակ թող։ Աննա Սերգէնեա, թող կտանք։ Կարծեմ այժմ...

Նա դիտովը ցոյց տուեց իւր փռուած անզօր մարմինը։ Վասիլիլ իւանովիչը դուրս ելաւ։

—Էհ, շնորհակալութիւն,—կրկնեց Բաղարովը։—Արքայազմալի է ձեր արածը։ Ասում են, թէ թագաւորներն էլ ացելում են մեռնողներին։

—Եւ դենիլ Վասիլիլ, ես լոյս ունիմ, որ...

—Էհ, Աննա Սերգէնեա, աւելի լաւ է ճիշդը ասեմք։ Իմ բանս պրծած է։ Անուի տակն ընկալ։ Բանից դուրս է գալիս, որ ապագայի վրայ մտածելու հարկաւորութիւն էլ չի եղել։ Մահը հին բան է, բայց ամեն մէկիս համար էլ ի նոր է։ Մինչև այժմս դեռ չեմ վախենում... շուտով կ'հասնի անգիտակցական դրութիւնը, և ֆիւտ։ (Նա թեթևակի շարժեց ձեռքը)։ Էհ, էլ ի՞նչ ասեմ... ձեզ սիրում էի։ դա առաջ էլ ոչ մի իմաստ չուներ, իսկ այժմ հո—աւելի ևս։ Սէրը—ձե է, իսկ իմ սեպհական ձևս արդէն քայքայւում է։ Աւելի լաւ է ասեմ, թէ—Խնչքան փառաւոր էք։ Ահաւասիկ հէնց այժմս էլ կ'անգնած էք—այսպէս սիրուն...

Աննա Սերգէնեան ակամայ ցնցուեցաւ։

—Ոչինչ՝ չկալ, անհանգիստ մի լինիք... աստեցէք ամառեղ... Ինձ մի մօտենաք, որովհետեւ հիւանդութիւնս վարակիլ է։

Աննա Սերգէնեան արագութեամբ անցաւ սենեակը և նստեց Բաղարովի պռուկած գահաւորակի մօտի բազկաթոռի վրայ։

—Վեհանձն,—չնչաց Բաղարովը։—Ահ, ինչքան մօտ էք, և Խնչ ջահել, թարմ, մաքուր... այս անպիտան սենեակի

մէջ...էհ, մնաք բարով: Ապրեցէք երկար, դա ամենից լաւն է, և քանի ժամանակ կալ-օգտուեցէք: Դուք մի տեսէք, թէ ինչ ալլանդակ պատկեր է՝—կիսակենդան որդեմ դարձել, բայց էլի բանի մէջ եմ լինում ինձ համար: Ձէ, ես էլ մի ժամանակ մտածում էի՝—ինչքան գործեր պիտի անեմ, չեմ մեռնի: Ինչպէս թէ մեռնել: դեռ գործ կալ անելու: ես հո հսկալ եմ: Խսկ ալժմս հսկալի բոլոր բանն ու գործն ալն է, թէ ինչպէս անի, որ վաւելուչ կերպով մեռնի, թէպէտ ձեւ հոգն է նրա մեռնելը... Ինչ ուզում է լինի պոչ չեմ խաղացնիլ:

Բազարովը լուեց և սկսաւ ձեռքով իւր բաժակը վնտուել: Աննա Սերգէննան, առանց ձեռնոցները հանելու ու երկշոտութեամբ շունչ քաշելով, ջուրը տուեց նրան:

—Դուք ինձ կ'մոռանաք,—նորից խօսեց Բազարովը,—մեռածը սաղի ընկեր չի: Հալրոս կ'սկսի ձեզ պատմել, թէ ինչպիսի մարդ է կորցնում Ռուսիան... Այդ դատարկ բան է: Բայց ծերուկին չաշխատէք հակառակն ապացուցանել: Ինչքան չլինի էլի միսթարութիւն է: Մօրս էլ սիրտ տուէք: Ձեր շրջաններէ մէջ ցերեկը ճրագով որ մանգաք, ալդպիսի մարդիկ չէք գտնիլ... Ես պէտք եմ Ռուսիային... Ոչ, երևում է, որ պէտք չեմ: Եւ ձվ է պէտքականը: Կօշկակարը պէտք է, գերձակը պէտք է, մագդործը... միս է ծախում... մագդործը... սպասեցէք, մտքերս խառնում են... Այստեղ անտառ կալ...

Բազարովը ձեռքը ճակատին դրեց:

Աննա Սերգէննան կռացաւ նրա վրալ:

—Եւգենիլ վասիլևիչ, ես ալստեղ եմ...

Բազարովը մէկէն ձեռքը քաշեց և վերկացաւ տեղից:

—Մնաք բարով,—ասաց նա լանկարծական ուժով, և աչքերը վերջին փալլով փալլեցին:—Մնաք բարով... Ախր... ալն ժամանակ ես ձեզ չհամբուրեցի... փչեցէք առկալծող կանթեղի վրալ և թող մարի...:

Աննա Սերգէննան շրթունքները կպցրեց նրա ճակատին:

—Եւ հերիք է,—ասաց Բազարովը և ընկաւ բարձի վերալ:—Այժմ... խաւար է...

Աննա Սերգէննան կամացուկ դուրս գնաց:

—Ինչպէս է,—չնչալով հարցրեց նրան վասիլիլ իւանովիչը:

—Քնեց,—պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով:

Բազարովն ալլաւ չպիտի դարթնէր: Երեկոյեան դէմ նա

գիտակցութիւնը բոլորովին կորցրեց, իսկ միւս օրը մեռաւ։ Տէր Ալէքսէյը կրօնական ծէսերը կատարել էր նրա վրայ, Երբ որ վերջին օծումն էին կատարում, երբ օր սուրբ մեռոնը կպաւ Բաղարովի կրծքին, նրա մէկ աչքը բացուեցաւ և, երբ որ տեսաւ զգեստաւորուած քահանային, ծխացող բուրվառը, սրբերի պատկերների առաջ վառած մոմերը, կարծես թէ սարսափի ցնցման պէս մի բան արտափալլեցաւ նրա մեռելային դէմքի վրայ։ Իսկ երբ արձակեց վերջին շունչը և տան մէջ ընդհանուր կոծ բարձրացաւ, Վասիլիւ Իւանովիչը խելքը կորցրածի պէս դարձաւ։ «Աս ասում էի, թէ կ'բողոքեմ» խաղտ ձայնով կանչում էր նա, բորբոքուած ու ծամուած դէմքով՝ օդի մէջ բռնեցքը շարժելով, ասես թէ մէկին սպառնալիք էր տալիս «և կ'բողոքեմ, կ'բողոքեմ»։ Բաց Արինա Վլասիւնան, արտասուքի մէջ թաթախուած, քաշ էր ընկել նրա վրդովը, և երկուսը միասեղ երեսի վրայ վալր ընկան գետին։ «Այդ կերպով էլ», լետով ծառաներին պատմում էր Անֆիսուկան, «կողք կողքի խոնարհեցրին գլուխները, հէնց գիտենաս կէս օրին մակաղած գառներ լինէին...»։

Բաց կանցնի կէս օրուալ տօթը, կ'գալ երեկոն ու գիշերը, ախուհետև կ'վերադառնան խաղաղ բնակարան, ուր քաղցրը քունը կտիրէ տանջուածներին ու խոնջացեալներին...

XXVIII

Վեց ամիս անցաւ։ Ձմեռն էր. անամպ սառնամանիքի դաժան լուսթիւնը տիրել էր ամեն տեղ. պինդ ձիւնը ոտքերի տակ ճըրճում էր։ ծառերը պատած էին վարդագոյն եղիամով. երկինքը դժգոյն զմբուխտի գոյն ունէր. ծխնելուղների վրայ մուխի քուլաները զլխարկի նման կեցած էին. առվալրկեան մի բացուող դռներից գոլորշին բարդ-բարդ դուրս էր պրծնում։ մարդկանց դէմքը թարմ, ասես թէ կծոտած լինէր. մրսած ձիւնը հապճեպով առաջ են վազում։ Բոռնուարի մէջ էր, օրը մօտենում վախճանին. երեկոյեան ցուրտը աւելի ու պինդ հուպ էր տալիս անշարժ օդը, և արինապոյն վերջալուսը արագ-արագ մարում էր։ Մարլինօի տան պատուհանները նոր նոր էին լուսաւորում։ Պրակոֆիլը սև ֆրակ ու սպիտակ ձեռնոց հագած, առանձնապէս հանդիսաւոր կերպով եօթը հոգու համար սեղան էր բաց անում։ Դրանից մի շաբաթ առաջ, ծխա-

կան փոքրիկ եկեղեցում, սուս ու փուս, համարեա առանց վկաների երկու պսակ էր կատարուել։ պսակուել էին Արկադիոն ու Կատեան և Նիկալայ Պետրովիչն ու Ֆենիչկան։ Իսկ ալս օրը Նիկալայ Պետրովիչը հրաժեշտի ճաշ էր տալիս իւր եղբօրը, որ գործով Մոսկուա էր գնում։ Աննա Սերգէենան էլ նորապսակներին առատօրէն բաժին հանելով, պսակից անմիջապէս լետով նոյնպէս Մոսկուա էր գնացել։

Ուղիղ ժամը երեքին բոլորն էլ սեղանի շուրջ էին հաւաքուած։ Միտեալին էլ էին այստեղ նստացրել։ Նրա համար արդէն ճամկաւոր ապարօշ կրող դալեակ էին բռնել։ Պաւէլ Պետրովիչը բաղմել էր Կատեալի ու Ֆենիչկալի միջև. ամուսիններն էլ իրենց կանանց կողքին էին տեղաւորուել։ Մեր ծանօթները վերջին ժամանակներս փոխուել էին՝ ամենքն էլ կարծես թէ դեղեցկացել ու առնականութիւն էին ստացել։ մենակ Պաւէլ Պետրովիչն էր լղարել, որից սակաւն նրա դէմքի արտայայտիչ զծերն աւելի գեղանի ու զրանսնիօրակա էին դարձել... Հէնց Ֆենիչկան էլ ուրիշ կին էր դարձել։ Մետաքսեայ նոր զգեստ հագած, թաւշեալ լալն գլխադարձը մազերին, ոսկէ շղթան վզին անշարժ նստած էր լարդանքով։ Նրա վրայ երևում էր լարդանք դէպի ինքը, դէպի ամեն բան, որ շրջապատել էր նրան, և մի ալնպիսի ձևով ժպտում էր, հէնց գիտենաս ուզում էր ասել. «Դուք ինձ ներեցէք. մեղաւորը ես չեմ»։ Եւ մենակ նա չէր ժպտացողը. ամենքն էլ ժպտում էին, ու նոյնպէս ասես թէ ներողութիւն խնդրում, ամենքն էլ մի քիչ անհամ էին զգում իրենց, մի քիչ տխուր էին, բայց իսկապէս խիստ լաւ դրութեան մէջ էին։ Ամեն մէկն աշխատում էր ծիւծաղելի պատրաստակամութեամբ ծառայել միւսին, հէնց իմանաս ամենքն էլ խօսք մէկ եղած՝ մի տեսակ պարզամիտ կատակերգութիւն էին ներկայացնում։ Ամենքից հանգիստը կատեան էր. նա միամիտ վստահութեամբ նայում էր չորս կողմը, և կարելի էր նկատել, որ Նիկալայ Սերգէենիչը արդէն գժուածի պէս սիրել էր նրան։ Չաչը վերջանալուց առաջ Նիկալայ Սերգէենիչը վերկացաւ և, բաժակը ձեռքն առած, ասաց Պաւել Պետրովիչին.

— Դու հեռանում ես մեզանից... դու հեռանում ես մեղանից, սիրելի եղբար, — սկսեց նա, — իհարկէ, կարճ ժամանակով. բայց և ալնպէս չեմ կարող չլալտնել քեզ, որ ես... որ մենք... քանի ես... քանի մենք... Հէնց դժբաղդութիւնն էլ ալն է, որ

մենք՝ ճառեր ասել չգիտենք, Արկադիյ, դու ասա:

—Ոչ հալըրիկ, ես պատրաստուած չեմ:

—Իսկ ես շատ լաւ եմ պատրաստուել: Պարզը, եղբայր, թող քեզ համբուրեմ, ցանկանամ ամենայն բարիք, և շուտով վերադարձիր եկ մեզ մօտ:

Պաւէլ Պետրովիչն ամենքի հետ էլ համբուրուեցաւ: Միտեալին էլ իհարկէ. բացի դրանից համբուրեց նաև Ֆենիչկայի ձեռքը որը սա դեռ մի շնորքով տալ էլ չգիտէր, և, երկրորդ անգամ լցրած բաժակը խմելով, խոր թառանչ քաշելով ասաց. «Բաղդաւոր լինիք, բարեկամներս! Farewell!»—Անգլիական այս լաւելուածն աննկատելի անցաւ. սակայն ամենքն էլ զգացուած էին:

«Բազարովի լիշտտակին» շշնջաց կատեան ամուսնու ախանջին, և բաժակը խփեց նրա բաժակին: Արկադիչն, ի պատասխանի, պիւնդ սեղմեց կնոջ ձեռքը, բայց արդ բաժակը բարձրաձայն առաջարկելու սիրտ չարաւ:

Սրանով էլ պիտի վերջանար:

Բայց իցէ թէ ընթերցողներից մէկն ու մէկը ուզէ իմանալ, թէ թէ՛ և անուամ ալժմա, հէնց ալժմա մեր նկարագրած անձերից ամեն մէկը: Պատրաստ ենք գոհացում տալու:

Մօտերքս Աննա Սերգէևնան ամուսնացաւ, ոչ սիրահարուած, ոչ էլ համոզումով, ռուսական տպագրաւ գործիչներից մէկի հետ, որ մի շատ խելօք, օրէնսգէտ մարդ է՝ գործնական հաստատուն խոհերով, անդդուելի կամքով և խօսելու զարմանալի շնորքով,—դա մի բարի և սառցի նման սառն բնաւորութեամբ դեռ մի երիտասարդ մարդ էր: Նրանք շատ հաշտ են ապրում, և շատ կարելի է երջանիկ էլ լինին... շատ կարելի է և սիրեն իրար: Իշխանուհի Կ-ն մեծաւ և նոյն իսկ մահաւան օրն էլ մոռացուեցաւ: Հայր ու որդի կիրսանովները բռնակութիւն հաստատեցին Մարիւնօյում: Նրանց գործերը կարգի են ընկնում: Արկադիչն գործին տաք կերպով կպած է և ներաւ «աղբարակն» արդէն բաւական խոշոր եկամուտ է բերում: Նիկոլայ Պետրովիչը Հաշտարար միջնորդ է դարձել և բոլոր ուժով աշխատում է. նա շարունակ շրջում է իրեն լանձնուած տեղերը. երկար ճառեր է խօսում (նա այն կարծիքին է, թէ գիւղացիներին պէտք է խելքի բերել), այսինքն միևնույն բառերի լաճախ կրկնութեամբ նրանց զահլան տանել), բայց դարձեալ, ճիշտն ասած, լիովին գոհ չի կացուցանում ոչ կր-

Թուած աղնուականներին, որոնք տոլոր են մերթ չիկով և մերթ մելամաղձորէն խօսել մանցիպացիալի մասին (ան-ը քը-թի մէջ արտասանելով), ոչ էլ անկիրթ ազնուականներին, որոնք չառանց ալլակալութեան հախոյում են «էս մուցիպացիան»։ Սրանց համար էլ, նրանց համար էլ շատ կակուղ մարդ է նա։ Կատերինա Սերգէեան որդի ունեցաւ անունը Կոլեա, իսկ Միտիան կարգին վաղում է ու կանոնաւոր էլ խօսում։ Ֆենիչկան, Ֆեդոսիա Նիկալանան, ամուսնուց ու Միտեալից լետով, ոչ ոքին ահպէս չի պաշտում, ինչպէս իւր հարսին, և երբ որ սա նըստում է դաշնամուր ածելու, պատրաստ է ամբողջ օրերով նըրանից չբաժանուել։ Ի դէպ լիշենք նաև Պետրին։ Յիմարու-թիւնից ու իրան ծանր պահելուց նա բոլորովին ընդամացել է, բոլոր ե-երը եու է արտասանում, բայց նա էլ ամուսնացաւ և բաւական էլ օժիտ առաւ կնոջ հետ, որը քաղաքացի բան-ջարարովի ալն աղջիկն է, որը երկու լաւ փեսացուների մեր-ժել էր միմիայն նրան համար, որ ժամացոյց չունէին։ մինչդեռ Պետրը չէ թէ միայն ժամացոյց, հապա և լալքաւոր անճիտք կօշիկ ունէր։

Դրեզդէնում, Բրիւլեան ճեմանոցում, ժամը երկսի ու չոր-սի միջեւ, ամենաբարձր դասակարգի զբօսանքի դուրս գալու միջոցին, կարող էք հանդիպել լիսուն տարեկանի մօտ, արդէն բոլորովին ալոորած և ասես թէ պաղագրա ունեցող, բայց դեռ գեղեցիկ, նուրբ հագնուած մի մարդ, որ իւր վրայ կրում է ալն առանձին կնիքը, որ ձեռք է ընելում միայն երկար ժամանակ հասարակութեան ամենաբարձր խաւերում ապրելով։ Այդ Պաւէլ Պետրովիչն է։ Նա առողջութիւնը կազդուրելու համար Մոսկուալից գնացել էր արտասահման և ընակութիւն էր հաստատել Դրեզդէնում, ուր աւելի անգլիացիներին ու ան-ցուոր ռուսներին հետ է լինում։ Անգլիացիների հետ իրեն պարզ, համարեա համեստ, բայց ոչ առանց արժանապատու-թեան է պահում։ Նրանք փոքր ինչ ձանձրալի են համարում նրան, բայց նրա մէջ տեսնում ու լարգում են կատարեալ ջեն-տլմէնը a perfect gentleman»։ Ռոսերի հետ աւելի բաց է, ա-զատութիւն է տալիս իւր մաղձին, իրեն էլ, նրանց էլ հեգ-նում։ Բայց նրա այս բոլոր արածն էլ շատ սիրուն, և անհոգ, և վախելու է դուրս գալիս։ Հետեւում է սլաւահանֆիւլների հա-լեսցըներին—լատին է, որ դա բարձր դասակարգի մէջ très distingué է համարւում։ Ոչ մի ռուսական բան չի կարդում,

բայց նրա գրասենյակն իրալ գրուած կալ գիւղական տրեխի նման շինած արծաթէ մոխրաման։ Ռուս տուրիստները շատ են նրա ետեւից քաշ ընկնում։ Մատմէլ Իլլիչ Կալեազիւնը, որ ժամանակաւոր ընդդիմադիրների մէջ է, Բոհեմիայի հանքալին ջրերն ուղեորելիս, վեհօրէն ալցեւեց նրան։ Իսկ ընկիւնները, որոնց նա, ասենք, քիչ է հանդիպում, քիչ է մնում պաշտեն նրան։ Ոչ ոք այնպէս շուտ ու հեշտ կերպով կարող չէ պալատական երաժշտութեան, Թատրոնի և այլ տոմսեր ձեռք բերել, ինչպէս der Herr Baron von Kirsanoff-ը։ Նա ձեռքից եկածին չափ շարունակ բարիք է անում։ Թէպէտ քիչ-քիչ, բայց դարձեալ աղմուկ է հանում, աչքի ընկնում,—ի դուր հո չէր մի ժամանակ հաշակ ունեցել բարձր դասակարգի մէջ։ Բայց ծանր է նրա կեանքը... աւելի ծանր, քան թէ կ'կարծէր... Բաւական է աչքդ ձգես նրա վրայ ռուսաց եկեղեցում եղած միջոցին, երբ առանձնակի պատին կաթնած, մաքի ծովն է ընկնում և, շրթունքները պինդ սղմած, երկար ժամանակ մնում է անշարժ, լետոյ լանկարծ ուշքի է գալիս և սկսում համարեալ թէ աննկատելի կերպով երեսը խաչ հանել...

Կուկուշկինան էլ է արտասահման ընկել։ Այժմ Հալդելբերգումն է և արդէն ոչ թէ բնական գիտութիւններ է ուսումնասիրում, հապա ճարտարագետութիւն, որի համար, իւր ասելով նոր օրէնքներ է գտել։ Առաջուայ նման դարձեալ մօտ մօտ է անում ուսանողներին, մանաւանդ երիտասարդ ռուս Փիզիկոս ու քիմիկոսներին, որոնցով լցուած է Հալդելբերգը, և որոնք, սկզբներում իրերի վրայ իրենց ունեցած լուրջ բերդը, և որոնք, սկզբներում իրերի վրայ իրենց ունեցած լուրջ հալեացքովը զարմացնում են գերմանացի պրոֆեսորներին, իսկ վերջը նոյն պրոֆեսորներին զարմացնում են իրենց կատարեալ անգործութեամբ ու բացարձակ ծուլութեամբ։ Այդպիսի երկու-երեք քիմիկոսների հետ, որոնք չեն կարողանում թթուածինն ազօտից զանազանել, բայց որոնք ամեն բան ժխտում են և լի են անձնապատշաճութեամբ, մէկ էլ մեծն Սլիսկիչի հետ, Պետերբուրգի քարերն է մաշում Սիտնիկովը, որ նոյնպէս պատրաստուած է մեծ դառնալու և, իւր ասելով, Բազարովի «գործն» է շարունակում։ Ասում են, մօտերքս չգիտեմ ով նրան ծեծել է, բայց նա էլ լետ չէր մնացել—մի մութ լրագրի մէջ լածկած մի մութ լօղուածի մէջ ալկնարկութիւն էր արել, թէ իրեն ծեծողը վախկոտի մէկն է։ Նա այդ բանը հեգնութիւն է համարում։ Հալլը առաջուայ նը-

ման էլ ծառայեցնում է նրան, իսկ կինը նրան լիմար...և գրական մարդ է համարում:

Ռուսիայի հեռավոր անկիւններից մէկում գիւղական մի հանգստարան կաւր Սովորաբար մեր բոլոր հանգստարանների նման, դա էլ տխուր պատկեր ունի՝ շրջապատող փոսերը վաղուց լցուած են արօտով. փալտէ գորշ խաչփալտերը խոնարհել են և փոսում իրենց մի ժամանակ ներկած կտրան տակին. տապանաքարերը բոլորն էլ տեղերից շարժուած են, հէնց գիտենաւ մէկը տակից նրանց բրթում լինի. երկու-երեք ճղակոտոր ծառեր հազիւ հազ շուաք են անում. ոչխարներն անարգել ման են գալիս գերեզմանների վրայ...Բայց գերեզմանների մէջ կալ մէկը, որին մարդու ձեռք չի կպչում, որին ոչ մի անասուն ռոքի տակ չի տալիս՝ մենակ թռչուններն են նստում նրա վրայ և արշալուսին իրենց երգերն ասում: Երկաթէ վանդակով պատած է դա, երկու ծալին տնկած երկու մատղաշ եղենի—Սեզենիլ Բազարոյն է թաղուած ալդտեղ: Մօտիկ գիւղից ալդ գերեզմանի վրայ լաճախակի գալիս են երկու զառամեալ ծերունիներ—մարդ ու կին: Նրանք իրար օգնելով, ծանր քալելով գալիս են գերեզման. մօտենում են վանդակապատին, ծնգան վրայ վալր ընկնում, և երկար, և դառնաւ. պէս լաց լինում, և երկար, և ուշադրութեամբ մօտիկ տալիս լուռ քարին, որի տակ պառկած է իրենց որդին, մի երկու կարճ բան բառեր ասում միմեանց, քարի վրայից փոշին սրբում, մէկ էլ եղենու ճիւղն ուղղում, և դարձեալ աղօթում, և չեն կտրուղանում բաժանուել աչն տեղից, որն ասես թէ նրանց աւելի մօտ է կացուցանում իրենց որդուն, իրենց ուրդու լիշատակին...Մթթէ իրենց աղօթքը, իրենց արտասուքն անպտուղ է մնալու: Մթթէ սէրը, սուրբ, անձնուէր սէրն ամենակարող չէ: Ոհ, ոչ ի՞նչ բուռն, մեղսալից, անհնազանդ սիրտ ուղում է ծածկուած լինի գերեզմանի մէջ, նրա վրայ բուսած ծաղիկները, իրենց անմեղ աչքերով անխռով կերպով մօտիկ են տալիս մեզ—լոկ լաւիտենական հանգստի մասին չեն խօսում նրանք, «անտարբեր» ընութեան ալս մեծ հանգստի մասին. նրանք խօսում են նաև լաւիտենական հաշտութեան և անվախճան կեանքի մասին...:

